ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2012թ. նոյեմբերի 5 թիվ 105 -Ա

ԶԵՄՖԻՐԱ ՓՈՉԻԿՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 226-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ- 728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2012 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 102-Ա կարգադրությամբ ստեղծված աշխատանքային խմբի զեկուցագիրը, ''Արտենիի առողջության կենտրոն'' փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Զեմֆիրա Փոչիկյանի 2012 թվականի նոյեմբերի 1-ի բացատրագիրը՝ ***կարգադրում եմ.***

Աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի ''Արտենիի առողջության կենտրոն'' փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Զեմֆիրա Փոչիկյանին հայտարարել նկատողություն:

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ